ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԲԵՐԴԻԿԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ

գ. Բերդիկ

„ 12„ „ 12 „ 2011թ.
N 3

Համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը , հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը հաստատելու մասին

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ օրենքի 16-րդ հոդվածի,26-րդ և 32-րդ հոդվածի 1-ին,„Իրավական ակտերի մասին„ օրենքի 72-րդ հոդվածով:

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել Բերդիկ համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

Ուժը կորցրած ճանաչել Բերդիկ համայնքի ավագանու 23.12.2010թ-ի նո 4 նիստը,Բերդիկ համայնքի ղեկավարի աշխատակազմի թվաքանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

Ավագանու անդամներ՝

1. Հ.Խաչատրյան
2. Հ. Կարապետյան
3. Կ.Թարվերդյան
4. Գ.Ավետիսյան
5. Լ.Դավթյան

Բերդիկ համայնքի ղեկավար Ա.Բաղդասարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԲԵՐԴԻԿԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ

գ. Բերդիկ

,, 12,, ,, 12 ,, 2011թ.
N 3

ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ,ԹՎԱՔԱՆԱԿԻ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

1.Աշխատակիցների թվաքանակը - 8

| Հաստիքի Անվանումը | Հաստիքային Միավորը | Պաշտոնային Դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | | 100000 |
| Աշխատակազմի քարտուղար | 1 | 75000 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 70000 |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 40000 |
| Հարկահավաք | 1 | 40000 |
| Համակարգչային օպերատոր | 1 | 45000 |
| Գրադարանավար | 1 | 40000 |
| Հավաքարար | 1 | 35000 |
| Ընդամենը | | 445000 |

Ընդամենը չորս հարյուր քառասունհինգ հազար դրամ

Բերդիկ համայնքի աշխատակազմի քարտուղար Ք. Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԲԵՐԴԻԿԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

գ. Բերդիկ

„ 12„ „ 12 „ 2011թ.
N 3

Տեղական տուրքերի և վճարների
դրույքավճարները սահմանեու մասին

Ղեկավարվելով „Տեղական տուրքերի և վճարների մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 7,10 և 11-րդ հոդվածներով,Տեղական Ինքնակառավարման Մարմնի օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով:

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել Բերդիկ համայնքի 2012 թ-ի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի շինությունների ներառյալ ոչ հիմնական (շինարարության տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում՝այգեգործական ամառանոցային տների,ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7500դրամ:
բ) սույն կետի ա ենթակետով չնախատեսված օբյեկտների համար
բ.ա 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15000դրամ:
բ.բ 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25000դրամ:
բ.գ 1001-ից ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 35000դրամ:
Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
Գ) մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500դրամ:
Դ)20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2500դրամ:
Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման,ուժեղացման,
վերականգնման,արդիականացման աշխատանքների (բացառությամբ
Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝շինարարության թույլտվության չպահանջվող դեպքերի) համար,եթե սահմանված ՝ շինարարության

թույլտվություն չպահանջվող դեպքերի համար ,եթե սահմանված կարգով հաստատված է ճարտարապետաշինարարական նախագծով`
ա) չի նախատեսվում կցակառույցների,վերնակառույցների,շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա/ հետհարկով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն 1500դրամ:
բ/ բացի օբյեկտի վերակառուցման,ուժեղացման,վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից նախատեսվում է նաև կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա և հետհարկով/ օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության,ապա բացի սույն կետի ա ենթակետով սահմանված դրույքաչափի,կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը` օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով:
գ/ նախատեսվում է միայն կցակառույցների , վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա/ շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:
3.Համայնքի վարչական տարածքում,շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ:
1,2,3 կետերով սահմանված դրույքաչափերի համար կիրառվել է 0.5 գործակիցը:
Համայնքի տարածքում ոգելից խմիչքների ծխախոտի արտադրանքի և վաճառքի թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է `
ա/ ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար` հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում`յուրաքանչյուր եռամսյակի համար`2500դրամ:
բ/ ծխախոտի վաճառքի թույլտվության համար`հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում`յուրաքանչյուր եռամսյակի համար`2500դրամ:
Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու,հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար ` տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար`1000դրամ:
Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար ` մասնակիցներից վճար`2000դրամ:
Ավագանու անդամներ`

1. Հ.Խաչատրյան
2. Հ. Կարապետյան
3. Կ.Թարվերդյան
4. Գ.Ավետիսյան
5. Է.Դավթյան

Բերդիկ համայնքի ղեկավար Ս.Բաղդասարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԲԵՐԴԻԿԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ

գ. Բերդիկ

,, 12,, ,, 12 ,, 2011թ.
N 3

Համայնքում հորատված խորքային
հորի 10% համաֆինանսավորման
գումարի մարման մասին

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Բերդիկ համայնքի 2012 թ-ի բյուջեով հաստատել համաֆինանսաորման 2500000դրամ գումարը և փոխանցել ,,Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակին,, առաջին եռամսյակում:

Ավագանու անդամներ՝

1. Հ.Խաչատրյան
2. Հ. Կարապետյան
3. Կ.Թարվերդյան
4. Գ.Ավետիսյան
5. Լ.Դավթյան

Բերդիկ համայնքի ղեկավար Ա.Բաղդասարյան